Ասեղնագործություն

Ասեղնագործությունը ժողովրդի մեջ ամենատարածված արվեստներից է: Գործել են և՛ կանայք, և՛ տղամարդիկ, և՛ անհատ մարդիկ, և՛ արհեստանոցում խմբված արհեստավորները, ինչպես նաև՝ կուսանոցներում և վանքերում: Թելանյութերի բազմազանությունը, ճոխ երանգները, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի օգտագործումը, ոսկեթել ու արծաթաթել կարատեսակները հարստացրել են հայկական ասեղնագործության տեսակները:

Եթե բանվածքը կատարվել է արհեստանոցներում, ուրեմն պետք է տեղի ունենար աշխատանքի բաժանում և դրա հետ միասին՝ նեղ մասնագիտացում. վարպետներից ոմանք ասեղնագործել են դեմքը, ձեռքը, ոտքը: Ֆոնը, դաշտը մի ուրիշն է արել, իսկ շքեղ բուսականությունը, գունագեղ ծաղիկները, ծառ ու պտուղները, որոնցով հարուստ են եկեղեցական բոլոր ասեղնագործությունները, կատարել են այլ վարպետներ: Փաստեր կան, որ որևէ կույս կամ աշխարհիկ մի կին եկեղեցու համար ասեղնագործ նվեր է պատրաստել տասը և ավելի տարիների ընթացքում: Եկեղեցուն նվեր տալու համար պատվիրատուն այդքան ժամանակ չէր կարող սպասել, և անպայման պետք է տեղի ունենար աշխատանքի բաժանում, գործը պետք է կատարեին ընկերովի:

Պետք է նշել նաև, որ հայ իրականության մեջ, նույնիսկ ոսկեթելի ոսկին եղել է իսկական ոսկի, հետո այն փոխարինվել է պղնձի և այլ մետաղների խառնուրդով: Ոսկե, արծաթե թելերի մեջ հանդիպում են այնպիսիները, երբ մետաղյա թելի հետ երևում է գունավոր մետաքսաթելը: Դրանով ասեղ-

նագործվել են կերպարված մարդկանց մորուքը, մազերը, հագուստները: Սովորաբար ոսկեման-յալ թելի միայն ոսկին է երևում, իսկ նրա հիմքը կազմող կենդանական ջիղը, վուշե կամ մետաքսե ամուր թելը չի երևում: Հին ասեղնագործություն-ների մեջ կարերն այնքան թանձր են և ամուր, որ չեն քանդվում: Դրանցից շատերի մետաքսե գործ-վածքը մաշվել- թափվել է, և բանվածքը մնացել է կտավի վրա: Մարգարիտները զարդարանքների վրա կարվել են չափազանց ամուր բարակ թելով, գոհարները սովորաբար բանեցվել են ոսկե /ար-ծաթե, ոսկեջրած / բների մեջ, որոնք կարվել են գործվածքի վրա, հաճախակի դրված են նաև ծա-ղիկի միջուկում: Ասեղնագործության մեջ գոհար-ների փոխարեն երբեմն հանդիպում են գունավոր ապակյա զարդեր: